



«Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի 2019 թվականի գործունեությունը

ՀԿԲ-ի իրականացրած միջոցառումները

	Միջոցառման անվանումը	Հակիրճ նկարագիր	Կամավորների/Մասնակիցների քանակը	Գործընկերներ
1.	Կամավորություն. հանդիպում-քննարկում/ Volunteering: meeting-discus	Մարտի 2-ին «Հայ կամավորների բանկ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը մասնակցեց «Մարդու իրավունքներ»-ի ակումբի կողմից կազմակերպված հանդիպում-քննարկմանը, որին ներկա էին նաև միջազգային և տեղական մի քանի այլ կամավորական կազմակերպություններ: Մասնակից կազմակերպությունները ներկայացրեցին կամավորությամբ զբաղվել ցանկացող երիտասարդներին անդամագրվելու հնարավորությունները: Հայ Կամավորների Բանկի փոխնախագահ Հայարփի Հակոբյանը պատմեց եհկ-ի գործունեության, սպասվող ծրագրերի մասին և պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին:	25-30	
2.	Բաց դռների օր՝ ՀԿԲ-ում/ Open Doors Day at AVB	Ապրիլի 2-ին «Հայ կամավորների բանկ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը կազմակերպեց «Բաց Դռների Օր» տեղեկատվական հանդիպումը: Հանդիպման ընթացքում երիտասարդներին ներկայացվեց կամավորության գաղափարը, սկզբունքները, կամավորական աշխատանք առաջարկող կազմակերպությունների իրավունքներն ու պարտավորությունները, ինչպես նաև անդրադարձ եղավ «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի գործունեությանը, առկա կամավորական աշխատանքներին և ՀԿԲ-ի գալիք միջոցառումներին ու ծրագրերին: Հանդիպման վերջին հատվածում երիտասարդները, ում հետաքրքրեց Հայ կամավորների բանկի գործունեությունը և ցանկություն հայտնեցին անդամագրվել, տեղում լրացրեցին հայտ և մասնակցեցին հարցազրույցին:	50	Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդ

		Շուտով պարզ կլինեն հարցազրույցի արդյունքները և ՀԿԲ-ի թիմը կհամալրվի նոր կամավորներով: Շնորհակալություն ենք հայտնում Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդին միջոցառման անցկացման համար տարածք տրամադրելու համար:		
3.	Նորընտիր կամավորների հետ հանդիպում	<p>Ապրիլի 28-ին տեղի է ունեցել «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի նորընտիր կամավորների առաջին ժողովը: Հանդիպումը ընդհանուր առմամբ նվիրված էր ծանոթությանը: Հանդիպումը բաժանվեց 2 մասի:</p> <p>Առաջին մասում կամավորները ծանոթացան միմյանց հետ: Կամավորները բաժանվեցին զույգերի, և նրանց տրվեց որոշակի ժամանակ իրար ճանաչելու, միմյանց հմտությունների ու հետաքրքրությունների մասին իմանալու համար: Այնուհետև յուրաքանչյուր կամավոր ներկայացրեց իր զույգին:</p> <p>Հանդիպման երկրորդ մասն աշխատանքային էր. կամավորները բաժանվեցին խմբերի և, ըստ առաջադրանքի, քննարկեցին տարբեր ծրագրային առաջարկներ:</p> <p>Խմբերն ունեին մենթորներ, ովքեր ուղղորդում էին կամավորներին, օգնում կարծիքների մշակման և գաղափարների ներկայացման հարցում:</p>	30	
4.	Կամավորություն. Նոր սկիզբ	<p>«Կամավորություն. Նոր Սկիզբ» նախագիծը մշակվել է 2018 այն երիտասարդների համար, ովքեր երբեք չեն զբաղվել կամավորությամբ կամ դժվարանում են ընդգրկվել կամավորական աշխատանքներում, սակայն շատ մեծ ցանկություն ունեն ներգրավվել:</p> <p>Նախագծի առաջին փուլով երիտասարդները մասնակցում են երկօրյա դասընթացի՝</p> <ol style="list-style-type: none"> 1. «Կամավորություն», 2. «Թիմային աշխատանք», 3. «Հաղորդակցություն», 4. «SMM բազային գիտելիքներ», 5. «Գեղեցիկ և գրագետ CV», 6. «Հարցազրույց», 7. Փորձառու կամավորները կիսվում են իրենց փորձով: 	86	

		<p>Երկրորդ փուլում մասնակիցներին կցվում են մենթորներ, ովքեր մեկ ամսվա ընթացքում օգնում են պատրաստել գրագետ CV, նախապատրաստվում են հարցազրույցի և ՀԿԲ-ի միջոցով ներգրավում առաջին կամավորական աշխատանքում:</p> <p>2019 թվականին իրականացվել է նախագծի 4 փուլ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ապրիլի 27-ին և 28-ին, 5-րդ փուլ, 20 մասնակից 2. Հունիսի 8-ին և 9-ին , 6-րդ փուլը, 20 մասնակից 3. Սեպտեմբերի 7-ին և 8-ին, 7-րդ փուլ, 26 մասնակից 4. Հոկտեմբերի 19-ին և 20-ին, 8-րդ փուլ, 20 մասնակից 		
5.	Կամավորություն. Նոր սկիզբ Դիլիջանում	<p>Հուլիսի 25-ին Դիլիջանի համայնքային կենտրոնի հրավերով «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի թիմը Դիլիջանում էր՝ տեղի կամավորների համար անցկացնելու «Կամավորություն. Նոր սկիզբ» նախագիծը:</p> <p>«Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի նախագահ Մարինե Եղոյանն ու փոխնախագահ Հայարփի Հակոբյանը պատանիների համար անցկացրեցին «Կամավորություն», «Թիմային աշխատանք» և «Հաղորդակցություն» թեմաներով դասընթաց:</p> <p>Մասնակիցները ոչ միայն ստացան տեսական գիտելիքներ թեմաների վերաբերյալ, այլ նաև խաղ-առաջադրանքների միջոցով ամրապնդեցին ստացած նյութը:</p> <p>Մեր թիմը Դիլիջանից վերադարձել է մեծ տպավորություններով և հետագա համագործակցության ակնկալիքով:</p>	25	Դիլիջանի համայնքային կենտրոն
6.	Կրթություն և Կամավորություն Եվրոպայում Education and volunteering in Europe	<p>Հոկտեմբերի 2-ին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Կրթություն և կամավորություն Եվրոպայում» թեմայով տեղեկատվական հանդիպում, որի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են Եվրոպայում կրթություն ստանալու և կամավորական աշխատանք կատարելու հնարավորությունները:</p> <p>Հանդիպման առաջին՝ կրթություն բաժնի բանախոսն էր Հայաստանում Erasmus+ ազգային գրասենյակից ծրագրի պատասխանատու Անի Թորոպյանը, ով խոսեց Էրազմուս+ ծրագրի բարձրագույն կրթության ոլորտում առկա կրթաթոշակային հնարավորությունների, դիմելու կարգի և ժամկետների մասին:</p>	40	-Հայաստանում Erasmus+ ազգային գրասենյակ - Երիտասարդական ակումբների դաշնություն

		<p>Հաջորդիվ Erasmus + շրջանավարտներ Դավիթ Աղաբեկյանը և Աննա Գևորգյանը կիսվեցին իրենց փորձով՝ մատնանշելով այն դժվարությունները, որոնց հանդիպել են և այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք ձեռք են բերել ուսումնառության ընթացքում:</p> <p>Հանդիպման երկրորդ հատվածը նվիրված էր կամավորությանը: Բանախոսն էր Երիտասարդական ակումբների դաշնության գլխավոր քարտուղար Արմինե Մովսեսյանը, ով խոսեց Եվրոպայում կամավորական աշխատանք իրականացնելու հնարավորությունների, ինչպես նաև կարճաժամկետ երիտասարդական ծրագրերի մասին:</p> <p>Այնուհետև Եվրոպայում կամավորական աշխատանք կատարած երիտասարդները՝ Հասմիկ Պետրոսյանն ու Ժենյա Հարությունյանը կիսվեցին իրենց փորձով: Խոսքի ընթացքում ներկայացրեցին նաև, թե ինչ խնդիրներ կարող են առաջանալ և ինչպես կարելի է դրանք հաղթահարել:</p> <p>Շնորհակալ ենք Հայաստանում Erasmus+ ազգային գրասենյակին և Երիտասարդական ակումբների դաշնությանը համագործակցության համար:</p>		
7.	«Մասնագիտական կողմնորոշում» ծրագրի փակման միջոցառում	<p>Սեպտեմբերի 30-ին «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամի և Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության համագործակցությամբ իրականացվող «Մասնագիտական կողմնորոշում» ծրագրի փակման միջոցառումն էր, որի շրջանակում երիտասարդների հետ ակտիվ աշխատող կազմակերպությունները ներկայացնում էին կամավորական աշխատանք կատարելու, աշխատանքային փորձաշրջան անցնելու, միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորությունները, ինչպես նաև կազմակերպության գործունեությունը:</p> <p>«Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները նույնպես ներկա էին միջոցառմանը՝ ներկայացնելու ՀԿԲ-ն, առկա կամավորական աշխատանքները և առաջիկա ծրագրերը, պատասխանելու երիտասարդներին հետաքրքրող հարցերին:</p>	50-100	- «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամի -Վորլդ Վիժն Հայաստան
8.	EmployMEnetwork Forum 2019	<p>Նոյեմբերի 16-ին «Հայ կամավորների բանկ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը իրականացրեց “EmployMEnetwork” ֆորումը, որի նպատակն էր բացահայտել և ներկայացնել 21-րդ դարի աշխատողի կերպարը, բացահայտել հաջողակ ու անփոխարինելի աշխատող դառնալու միջոցները, գործիքներն ու հնարավորությունները: Ֆորումի շրջանակում հյուրընկալեցինք չորս հիմնական խոսնակների,</p>	60	

		<p>ովքեր ներկայացրեցին այսօրվա գործատուի պահանջները տարբեր տեսանկյուններից և ևս երկու խոսնակ կիսվեցին իրենց հաջողության պատմությամբ:</p> <p>Ֆորումի խոսնակներն էին՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ -«Կասկադ Քնսայթընս» մարդկային ռեսուրսների կառավարման խորհրդատվական ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրեն, -Հայաստանի Մարդկային Ռեսուրսների Ասոցիացիայի հիմնադիր-նախագահ, - Մարդկային ռեսուրսների կառավարման տարածաշրջանային համաժողովի հիմնադիր 2. ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ -Հայկական տեղեկատվական կենտրոնի հիմնադիր -Ելակետ լրատվական (Երևան, Մոսկվա, Լոս անգելես) գործակալության հիմնադիր -YerevanNews լրատվական կայքի հիմնադիր 3. ՆՎԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ -Spring PR Ընկերության համահիմնադիր, խորհրդի նախագահ - ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն դոցենտ, -PR Մագիստրոսական ծրագրի ղեկավար, սոց.գիտ.թեկն. 4. ԼՈՒՍԻՆԵ ԽԱՆԴԱՆՅԱՆ -Հոգեբան -Անձնային աճի և զարգացման մասնագետ -Կազմակերպչական հոգեբանություն Հաջողության պատմություններ 5. ՎԱՐԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ -«Թավա», «Կճուճ», «Արիշտա», «Լոշ» ռեստորանների հիմնադիր-սեփականատեր 6. ԱՐՄԵՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ -«Հումորի լիգա» հեռուստաշոուի գլխավոր պրոդյուսեր -FunnyMen Production-ի համահիմնադիր և պրոդյուսեր, - Fest.am ընկերության համահիմնադիր 		
9.	Կամավորների միջազգային օր	<p>Դեկտեմբերի 5</p> <p>Տարվա լավագույն կամավոր մրցանակաբաշխություն</p> <p>Արդեն 3-րդ տարին անընդմեջ, դեկտեմբերի 5-ին՝ Կամավորների միջազգային օրը, «Հայ Կամավորների Բանկ» երիտասարդական հասարակական կազմակերպությունն իրականացնում է «Տարվա Լավագույն Կամավոր» մրցանակաբաշխությունը:</p> <p>Այս տարի Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումն իրականացվեց Վորլդ Վիժն Հայաստանի և Եվրոպական միության աջակցությամբ:</p>	80-100	Տարվա Լավագույն Կամավոր Մրցանակաբաշխության գործընկերներն են՝ 1. Եվրոպական միությունը 2. Վորլդ Վիժն Հայաստանը 3. «ՊԱՄԻ ՖԼՈՐԱ» ծաղկի խանութը 4.

	<p>Միջոցառման առաջին հատվածում ներկայացվեց ՀԿԲ-ի վերափոխված www.volunteers.am կայքը, որը կծառայի որպես տեղեկատվական կայք, կնպաստի ՀՀ-ում կամավորության մշակույթի զարգացմանն ու տարածմանը, կամրապնդի կապը կամավորությամբ հետաքրքրվող երիտասարդների և կամավորի ներուժի կարիք ունեցող կազմակերպությունների միջև:</p> <p>Այնուհետև «VolEx: My way to success» նախագծի շրջանակում հրավիրյալ խոսնակները մոտիվացիոն ելույթների միջոցով կիսվեցին կամավորության իրենց հաջողության պատմություններով՝ ընդգծելով կամավորական աշխատանքի կարևորությունը իրենց թե՛ որպես անհատ, թե՛ որպես մասնագետ կայացման մեջ:</p> <p>Խոսնակներն էին.</p> <ul style="list-style-type: none"> • Արթուր Ղուկասյան, «Հայ Ֆեստ» «Հայֆեստ» միջազգային թատերական փառատոն • Մադլեն Մինասյան, PicsArt ընկերություն, կորպորատիվ գործերի ղեկավար • Փիրուզա Մանուկյան, Եվրասիա համագործակցության հիմնադրամ, ծրագրերի ղեկավար <p>Միջոցառման վերջին հատվածում տեղի ունեցավ «Տարվա Լավագույն Կամավոր» մրցանակաբաշխությունը, որի նպատակն է խրախուսել տարբեր ոլորտներում կամավորական աշխատանք կատարող և հաջողություններ գրանցած երիտասարդներին՝ մատնանշելով կամավորական աշխատանքի կարևորությունն ու անհրաժեշտությունը թե՛ անհատի, թե՛ երկրի զարգացման գործում:</p> <p>Այս տարի մրցանակներ հանձնվեցին 7 անվանակարգերում</p> <ul style="list-style-type: none"> • Միլենա Խեչոյանը դարձավ 2019 թվականի «Տարվա Լավագույն Կամավոր» <p>Մյուս անվանակարգի հաղթողներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Մամիկոն Կիրակոսյան՝ «Մարդու Իրավունքների ոլորտում Տարվա Լավագույն Կամավոր» • Գրիգոր Արտազյան՝ «Տարվա Ամենակտիվ Կամավոր» • Սուրեն Խառատյան՝ «Սպորտի ոլորտում Տարվա Լավագույն 	<p>«ԱԼՊԻՆԱ» հյուրանոցային համալիրը 5. «ՅԵԼԼ Էքսթրիմ Պարկ» ընկերությունը 6. «ՏԵԼԵՄԱՐԿԵՏ» ընկերությունը 7. VIVARO NEWS-ը 8. «Վիքիմեդիա Հայաստան» ԳՀԿ-ն 9. Eli.am նվերների խանութը 10. «Զանգակ» հրատարակչությու նը 11. «ԻՆՍՊՈՐՏ» մարզաառողջարա նային համալիրը 12. «Գուրմե Դուրմե» ընկերությունը 13. «Sarajyan trainings» ընկերությունը 14. «Արշավների ակումբ»-ը 15. Պոռոջանի Կոնյակի Գործարանը 16. PicsArt ընկերությունը</p>
--	---	---

		<p>Կամավոր»</p> <ul style="list-style-type: none"> • Եվա Դեմիրճյան՝ «Տարվա Լավագույն Համայնքային Կամավոր» • Կարեն Ղազարյան՝ «Սոցիալ-Կրթական ոլորտում Տարվա Լավագույն Կամավոր» • Խորեն Ամիրխանյան՝ «Սոցիալ-Մշակութային ոլորտում Տարվա Լավագույն Կամավոր» <p>Շնորհակալագրեր ստացան նաև այն երիտասարդները, ովքեր ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կամավորական գործունեություն են ծավալել: Շնորհակալագրեր հանձնվեցին նաև միջոցառման բոլոր գործընկերներին, ինչպես նաև 2019 թվականի Հայ կամավորների բանկ ԵՀԿ-ի գործընկերներին:</p> <p>Մեր հավատարիմ գործընկեր «ԷվենտՏուրա» ընկերությունն էլ ստացավ Պատվոգիր «Տարվա Լավագույն Գործընկեր» ճանաչվելու համար:</p>		
--	--	--	--	--

Միջոցառումներ, որոնցում ընդգրկվել են ՀԿԲ-ի կամավորները

	Միջոցառման անվանումը	Հակիրճ նկարագիր Ամսաթիվը ներառյալ	Կամավորների քանակը	Գործընկերներ
1.	ԱՃԹՆ-ն առաջին ազգային զեկույցին նվիրված համաժողով / Conference on EITI First National Report	Հունվարի 30-ին կայացավ ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից համատեղ կազմակերպված Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության առաջին ազգային զեկույցին նվիրված համաժողովը: «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն իրենց ակտիվ ներգրավվածությունն ունեցան համաժողովի նախապատրաստական և ընթացիկ կազմակերպչական աշխատանքներում:	6	Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
2.	«Startup Europe Week '19 EVN Co-creating the sustainable	Մարտի 15-ին ISTC կենտրոնում կայացել է «Startup Europe Week '19 EVN Co-creating the sustainable future» միջոցառման փակման արարողությունը: «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն ակտիվ ներգրավվածությունն ունեցան	5	“ISTC-Innovate Study Think Create” foundation

	future»	միջոցառման կազմակերպչական աշխատանքներում:		
3.	Միջազգային կրթական ֆորում	<p>Մարտի 22-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի է ունեցել «Մասթեր պլուս»-ի ընկերության կազմակերպված Միջազգային Կրթական ֆորումը: Ֆորումի ընթացքում միջազգային ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները տրամադրեցին մանրամասն տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ:</p> <p>«Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն իրենց ակտիվ և արդյունավետ մասնակցությունն ունեցան ֆորումի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին:</p>	15-20	«Մասթեր պլուս» միջազգային կրթական կազմակերպություն
4.	«Լույսի մոլորակ» էքսպո-կոնֆերանս	<p>Մարտի 23-ին Երևանի էքսպո ցուցահանդեսային կենտրոնում տեղի է ունեցել «Լույսի մոլորակ» խորագրով մոր և մանկան զարգացման էքսպո-կոնֆերանս՝ հանուն ավելի առողջ և կիրթ հասարակության:</p> <p>Միջոցառումն ուղղված էր ծնողներին անհրաժեշտ մասնագիտական տեղեկատվության տրամադրմանը, ֆիզիկապես և հոգեպես առողջ երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը: Կոնֆերանս-ցուցահանդեսը ներառում էր բաց և անվճար դասախոսությունների շարք ծնողների համար:</p> <p>Էքսպոյի շրջանակներում կազմակերպվել էր նաև երեխաների ժամանցի մասշտաբային ծրագիր:</p> <p>Էքսպո-կոնֆերանսի աշխատանքներում իրենց ակտիվ և արդյունավետ մասնակցությունն ունեցան «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն՝ աջակցելով ֆորումի կազմակերպչական աշխատանքներին:</p>	15	-CREO Project Solutions
5.	Հագուստի և խաղալիքի տեսակավորում	Ապրիլի 2-ին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի Կամավորները բարեգործական նախաձեռնության շրջանակում օգնեցին տեսակավորել և փաթեթավորել մանկատան երեխաների համար նախատեսված հագուստն ու խաղալիքները:	10	
6.	«Զվարթնոց»	Ապրիլի 5-ից հոկտեմբերի 1-ը «Զվարթնոց Վերածննդի»	7	«Զվարթնոց Վերածննդի»

	մրցույթ-փառատոն	հիմնադրամը իրականացրեց «Զվարթնոց» հայ երգի մրցույթ փառատոնը ՀՀ և Արցախի ողջ տարածքով: Այս ամիսների ընթացքում «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները օգնեցին կազմակերպիչներին տարբեր աշխատանքներում:		հիմնադրամ
7.	«Միրո Այբուբեն» մանրանկարչական ցուցահանդես	<p>Ապրիլի 28-ից մայիսի 10-ը Երևանում «Հայկական մանրանկարչության կենտրոն» հիմնադրամի նախաձեռնությամբ տեղի կունենա «Միրո Այբուբեն» մանրանկարչության մասնագիտական բարեգործական ցուցահանդեսը, որի նպատակն է տարածել և հանրայնացնել միջնադարյան հայկական մանրանկարչությունն ու հայոց այբուբենը ժամանակակից կիրառությամբ:</p> <p>Միջոցառումն իրականացվում է «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի հետ համագործակցությամբ:</p> <p>Ապրիլի 28-ին կամավորները հանդիպեցին կազմակերպիչների հետ, ծանոթացան ցուցահանդեսի մանրամասներին և իրենց գործառույթներին:</p> <p>ՀԿԲ-ի կամավորներն այս օրերին կլինեն ցուցասրահում, կդիմավորեն այցելուներին և կտրամադրեն ամբողջական տեղեկություն ներկայացված ցուցանմուշների վերաբերյալ, ինչպես նաև կօգնեն հիմնադրամի աշխատակազմին տարբեր կազմակերպչական աշխատանքներում:</p>	15	«Հայկական մանրանկարչության կենտրոն»
8.	Երևանի գինու օրեր	<p>Մայիսի 3-ին և 4-ին տեղի է ունեցել տարվա ամենասպասված ու կոլորիտային միջոցառումներից մեկը՝ «Երևանի գինու օրեր»-ը:</p> <p>Այս տարի նույնպես միջոցառման կազմակերպչական աշխատանքներում ներգրավված էին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները:</p> <p>Կամավորները օրեր շարունակ կազմակերպիչներին օգնեցին նախապատրաստական աշխատանքներում, ինչպես նաև միջոցառման օրերին՝ ստանձնելով տարբեր գործառույթներ:</p>	45	«Էվենտտուրա» ընկերություն

		Շնորհակալ ենք «Էվենտուրա» ընկերությանը վստահության, ինչպես նաև շարունակական և արդյունավետ համագործակցության համար:		
9.	«Ինովացիոն տեխնոլոգիաները տուրիզմի բնագավառում» միջազգային ֆորում	Մայիսի 14-ին «Բեսթ Վեսթերն Պլաս Կոնգրես» հյուրանոցում տեղի է ունեցել «Ինովացիոն տեխնոլոգիաները տուրիզմի բնագավառում» միջազգային ֆորումը: Նման ձևաչափով միջազգային ֆորում Հայաստանում առաջին անգամ անցկացվեց, որի նպատակն է Հայաստանում զարգացնել զբոսաշրջությունը, ինչպես նաև պոտենցիալ ներդրողների հետ համատեղ գործունեությամբ ստեղծել հարթակ առկա խնդիրները լուծելու համար: Միջազգային ֆորումի կազմակերպչական աշխատանքներում ներգրավված էին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները: Կամավորները կազմակերպիչներին օգնեցին կազմակերպչական աշխատանքներում՝ իրականացնելով տարբեր գործառնություններում:	10	«Արմենիա տուրիստիչեսկայա» ամսագիր
10.	«ՍՈՍ մանկական գյուղեր»	«Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն օգնեցին «Գլոբբինգ» ընկերությանը՝ «ՍՈՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար հավաքագրված 12 մեծ արկղ իրերը տեսակավորելու և դասավորելու գործում:	10	«Գլոբբինգ» ՍՊԸ
11.	«Քայլ առ քայլ» նախագիծ	«Իմ քայլը» հիմնադրամը և «Կենտրոն» հեռուստաընկերությունը «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի հետ համագործակցությամբ իրականացնում է «Քայլ առ քայլ» նախագիծը, որը նպատակն է միավորել բարերարների, մասնագետների, կամավորների ջանքերը և վերանորոգել բազմազավակ, սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանները: Մարտի 30-ին սկսվեց Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հերթական անապահով ընտանիքի բնակարարանի վերանորոգման աշխատանքերը, որին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի	10	«Իմ Քայլը» հիմնադրամ, «Կենտրոն» հեռուստաընկերություն

		<p>կամավորները:</p> <p>Շինարարական աշխատանքները շարունակելու մինչև մայիսի 10-ը, որից հետո իրենց սկսած գործն ավարտին հասցնելու նպատակով «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները մասնակցեցին արդեն իսկ վերանորոգված տան մաքրման աշխատանքներին:</p> <p>Մայիսի 11-ին տան տերերը նշեցին իրենց բնակարանամուտը:</p> <p>Կամավորներին չափազանց հուզել և մոտիվացրել է բնակարան առաջին անգամ մուտք գործող տերերի ժպիտները ու երջանկության արցունքները:</p> <p>Մեր կամավորները ավելի եռանդով կշարունակեն աշխատանքները նաև մյուս բնակարանների վերանորոգման ժամանակ:</p>		
12.	Ջազ երեկո	<p>Մայիսի 24-ին տեղի է ունեցել Հայաստանի պետական ջազ նվագախմբի համերգը, որի հատուկ հյուրն էր Վահագն Հայրապետյանը:</p> <p>Համերգի ընթացքում կազմակերպչական աշխատանքներում օգնեցին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները:</p>	6	Հայաստանի պետական ջազ նվագախումբ
13.	Արամ Խաչատրյան միջազգային մրցույթ	<p>Հունիսի 6-14-ը Երևանում անցկացվեց Արամ Խաչատրյան 16-րդ միջազգային մրցույթ ջութակ մասնագիտությամբ:</p> <p>«Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները ներգրավված էին մրցույթի կազմակերպչական աշխատանքներում, մասնավորապես ուղեկցում էին մրցույթի միջազգային մասնակիցներին և կատարում թարգմանություններ նրանց համար:</p>	10	
14.	Շառլ Անձնավորին նվիրված հուշ-երեկո	<p>Մայիսի 26-ին Երևանում տեղի ունեցավ լեգենդար շանսոնյե Շառլ Ազնավուրի ծննդյան 95-ամյակին նվիրված բացառիկ հուշ-երեկո, որին իրենց մասնակցությունն ունեցան ֆրանսիացի հայտնի ու սիրված երգիչ-երգչուհիները՝ Պատրիկ Ֆիորին, Հելեն Սեգարան, Լեա Կաստելը, Սլիմանին:</p> <p>Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում իրականացվող կազմակերպչական աշխատանքները կրկին</p>	70	Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր

		վստահված էին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ին: Շուրջ 70 կամավոր ներգրավված էին տարբեր աշխատանքներում՝ հյուրի դիմավորում, ուղեկցում, տեղավորում, աշխատանքներ ետնաբեմում արտիստների հետ , ընթացիկ այլ աշխատանքներ:		
15.	«Առողջությանն ընդառաջ» 3-րդ միջազգային կոնֆերանս	Հունիսի 1-ին «Եվրոպա Դոննա» կազմակերպության նախաձեռնությամբ իրականացվեց «Առողջությանն ընդառաջ» 3-րդ միջազգային կոնֆերանսը, որի կազմակերպչական աշխատանքներում այս տարի նույնպես ներգրավված էին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները:	10	«Եվրոպա Դոննա» կազմակերպություն
16.	«Հավասար և միասին» խորագիրը կրող մանկական բարեգործական մրցավազք	Հունիսի 2-ին «Հայ մայրեր» բարեգործական ՀԿ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հավասար և միասին» խորագիրը կրող մանկական բարեգործական մրցավազքը, որի ամբողջ հասույթը տրամադրվելու է «Հայ մայրեր» բարեգործական ՀԿ-ի հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական բուժմանը «Երագի տուն» մանկական վերականգնողական կենտրոնում:	10	«Հայ մայրեր» ՀԿ
17.	Project LA	Հունիսի 15-ին Երևանում տեղի է ունեցել Project LA-ի մենահամերգը: Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում իրականացվող համերգի կազմակերպչական աշխատանքներին մասնակցում էր նաև «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ն: Կամավորներն ընդգրկված էին հյուրերի դիմավորման, ուղեկցման, տեղավորման և այլ ընթացիկ աշխատանքներում:	30	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր
18.	Քունգ Ֆուի աշխարհ	Հունիսի 7-9-ը Հայաստանի Քունգ Ֆուի ֆեդերացիայի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Քունգ Ֆուի աշխարհի առաջնությունը, որին մասնակցում էր շուրջ 20 երկիր: «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն այս միջոցառման ընթացքում նույնպես կարևոր դերակատարում ունեցան՝ օգնելով մարզչական թիմին կազմակերպչական տարբեր աշխատանքներում, ինչպես նաև կատարելով թարգմանչական աշխատանքներ այլ ազգի մարզիկների համար:	15	Հայաստանի Քունգ Ֆուի ֆեդերացիա

19.	ArmAs wine & Jazz fest	Հունիսի 14-ին և 15-ին Արմասի այգիներում տեղի ունեցավ «ԱրմԱս գինու և ջազի» ամենամյա փառատոնը: Երկու օր շարունակ «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները ակտիվ մասնակցություն ունեցան նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներում:	15	«ԱրմԱս» ընկերություն
20.	Տանգոյի միջազգային փառատոն	Հունիսի 21-30-ը Երևանում տեղի ունեցավ Տանգոյի միջազգային փառատոնը, որի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին մասնակցեցին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները, մասնավորապես օգնելով կազմակերպիչներին միջոցառման մասին տեղեկություն տարածելու գործում:	8	
21.	Mix fight 42	Հուլիսի 6-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունեցել Mix Fight սպորտային մրցաշարը: «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն այս անգամ նույնպես ակտիվ ներգրավված էին կազմակերպչական աշխատանքներում, մասնավորապես դիմավորում և ուղղորդում էին հյուրերին, օգնում արագ լուծել առաջացած խնդիրները: Սա կամավորների համար շատ լավ հնարավորություն է ձեռք բերելու մեծ փորձ և սովորելու՝ ինչպես ճիշտ աշխատել մեծ միջոցառումների ժամանակ:	35	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր
22.	Հնդկա-հայկական համերգ	Հուլիսի 4-ին կամավորները ընդգրկվեցին համերգի կազմակերպչական աշխատանքներում:	30	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր
23.	Հորեյանական համերգ՝ նվիրված Կոմիտասի և Թումանյանի 150 ամյակներին	Հուլիսի 14-ին «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանում տեղի է ունեցել հորեյանական համերգ նվիրված Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին: Միջոցառման իրականացմանն իրենց նպաստն ունեցան «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները: Նրանք մեծ ոգևորությամբ և պատասխանատվությամբ դիմավորում և ուղեկցում էին համերգի հյուրերին՝	15	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

		Հայաստանում արտերկրի դեսպաններին, մշակութային գործիչներին ու այլ պաշտոնատար անձանց հարկ եղած դեպքում տրամադրելով հավելյալ տեղեկություն համերգի մասին:		
24.	Երևանի Գաստրո օր	<p>Հուլիսի 13-ին Երևանում «ԷվենտՏուրա» ընկերության նախաձեռնությամբ անցակցվեց «Երևանի Գաստրո օր» միջոցառումը, որը հերթական տոնն էր կազմակերպիչների կողմից, այս անգամ համեղ ուտեստների սիրահարների համար:</p> <p>Միջոցառման ընթացքում հայաստանյան և արցախյան հանրային սննդի լավագույն ներկայացուցիչները ներկայացրեցին և վաճառեցին իրենց՝ վարպետ-խոհարարների տեղում պատրաստվող ուտեստները: Միջոցառումն ուներ ևս մեկ կարևոր ուղերձ, այն է «ՈՉ պլաստիկին», միջոցառման ընթացքում արգելվելու էր միանգամյա օգտագործման պլաստմասե տարրաների օգտագործումը:</p> <p>Դե իսկ կազմակերպչական աշխատանքներում ակտիվ ներգրավված էին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները՝ օգնելով կազմակերպիչներին վերահսկել տաղավարների աշխատանքները, հետևել մաքրությանը և այլ կազմակերպչական աշխատանքներում:</p>	15	«ԷվենտՏուրա» ընկերություն
25.	«Հաշմանդամների շահերի պաշտպանության և երիտասարդության զարգացման» գիտաժողով	<p>Հուլիսի 13-ին 26-ը Երևանում էին «Հաշմանդամություն ունեցող անձանց կենտրոն» միջազգային կազմակերպության կամավորները, ովքեր օրեր շարունակ աշխատեցին «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամի սոցիալական տան աշխատակիցների հետ՝ կիսվելով իրենց փորձով ու գիտելիքներով: Այցի շրջանակում՝ հուլիսի 25-ին տեղի ունեցավ «Հաշմանդամների շահերի պաշտպանության և երիտասարդության զարգացման» գիտաժողով: Այս օրերի ընթացքում «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները աշխատեցին ԱՄՆ-ից ժամանած կամավորների հետ, մասնավորապես</p>	10	Երևանյան «Ռոտարի» համահայկական ակումբ

		կատարելով թարգմանչական աշխատանքներ: Հուլիսի 9-ին տեղի ունեցավ գիտաժողովի նախաձեռնող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամի տնօրեն Ելենա Կիրակոսյանի և Երևանյան «Ռոտարի» համահայկական ակումբի 2018-2019 թվականների նախագահ Գուրգեն Բարիկյանի հետ, ովքեր ներկայացրեցին ծրագիրը և կամավորների անելիքները: Հուլիսի 13-ին տեղի ունեցավ հանդիպում ԱՄՆ-ից ժամանած կամավորների և «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամի սոցիալական տան բնակիչների ու աշխատակիցների հետ:		
26.	"Marketing & Service in Hospitality"	Օգոստոսի 29-ից 30-ը Երևանում տեղի է ունեցել "Marketing & Service in Hospitality" հյուրընկալության ոլորտում բացառիկ միջոցառումը, որի բանախոսներն էին Նովիկով դպրոցի ղեկավարները: Միջոցառման կազմակերպիչն էր Baklachoff Business School-ը, մասնակցում էին ոլորտի ավելի քան 100 ներկայացուցիչներ: Միջոցառման կազմակերպչական աշխատանքներում ներգրավված էին նաև «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները, ովքեր դիմավորում էին հյուրերին, գրանցում, անհրաժեշտության դեպքում ուղեկցում և տրամադրում հավելյալ տեղեկություն:	10	Baklachoff Business School
27.	"Humor and Games for Social Good"	Մեպտեմբերի 6-ին և 7-ին Digital Communication Network-ի նախաձեռնությամբ Երևանում անցկացվել է "Humor and Games for Social Good" միջոցառումը, որին մասնակցությամբ հանդես եկան մոտ 30 երկրներից 48 թվային հաղորդակցության մասնագետ: Միջոցառման աշխատանքային թիմում ընդգրկված էին նաև «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները, ովքեր թիմին օգնեցին տարբեր կազմակերպչական աշխատանքներում:	10	-Digital Communication Network -Well PR agency
28.	"Armenia Tourism Awards"	Մեպտեմբերի 8-ին կայացել է տուրիզմի ոլորտում տարվա ամենասպասված և ամենամայա դարձած "Armenia Tourism	15	«Արմենիա տուրիստիչեսկայա» ամսագիր

	2019” մրցանակաբաշխություն	<p>Awards 2019” մրցանակաբաշխությունը:</p> <p>Միջոցառման շրջանակներում ներգրավված էին «Հայ կամավորական բանկ» ԵՀԿ-ի կամավորները, ովքեր օրեր շարունակ օգնում էին կազմակերպիչներին տարատեսակ նախապատրաստական աշխատանքներում:</p> <p>Իսկ բուն միջոցառման օրը դիմավորում էին հյուրերին, տրամադրում տեղեկություն, բաժանում նվեր-փաթեթները, կատարում թարգմանություններ անհրաժեշտության դեպքում, օգնում էին կազմակերպիչներին ետնաբեմում:</p>		
29.	«Cilicia: The Land of Lions» ֆիլմի պրեմիերա	<p>Սեպտեմբերի 12-ին Երևանում տեղի ունեցավ «Cilicia: The Land of Lions» ֆիլմի պրեմիերան, որը Հայաստանի կինոմատոգրաֆիայի մեջ առաջինն էր իր տեսակով և յուրահատուկ մոտեցմամբ:</p> <p>Կերտվել էր մի ամբողջ պատմական ժամանակաշրջան, ներկայացվել 3 ակնարկով:</p> <p>Միջոցառման շրջանակներում ներգրավված էին «Հայ կամավորական բանկ» ԵՀԿ-ի կամավորները, ովքեր օրեր շարունակ օգնում էին կազմակերպիչներին տարատեսակ նախապատրաստական աշխատանքներում:</p> <p>Իսկ բուն միջոցառման օրը դիմավորում էին հյուրերին, ուղեկցում էին սրահները, օգնում էին հագնել զրահները, տրամադրում հավելյալ տեղեկատվություններ ֆիլմի վերաբերյալ:</p>	20	«Դոմինո Փրոդաքշն» ընկերություն
30.	Jazz Versions of Classical Music	<p>Սեպտեմբերի 15-ին Հայաստանի պետական ջազ նվագախումբում տեղի է ունեցել Jazz Versions of Classical Music խորագրով ինքնատիպ ջազ երեկո, որի կազմակերպչական աշխատանքներին ներգրավվել են «Հայ Կամավորների Բանկ»-ի կամավորները:</p>	6	Հայաստանի պետական ջազ նվագախումբ
31.	Comedy Women Yerevan	<p>Սեպտեմբերի 20-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցած միջոցառման կազմակերպչական աշխատանքներին մասնակցում էր նաև «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ն:</p>	30	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր

		Կամավորներն ընդգրկված էին հյուրերի դիմավորման, ուղեկցման, տեղավորման և այլ ընթացիկ աշխատանքներում:		
32.	«Հայֆեստ» միջազգային թատերական փառատոն	Հոկտեմբերի 1-8-ը Երևանում թատերական տոնն էր. ընթանում էր 17-րդ «Հայֆեստ» միջազգային ամենամյա թատերական փառատոնը: «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան փառատոնի կազմակերպչական աշխատանքներում:	20	
33.	ՈՒՀԱ-ի հայկական միջազգային լիգայի կիսաեզրափակիչ խաղ	Հոկտեմբերի 20-ին տեղի է ունեցել այս տարվա ամենահումորային միջոցառումը՝ ՈՒՀԱ-ի հայկական միջազգային լիգայի կիսաեզրափակիչ խաղը, որի կազմակերպչական աշխատանքներում ներգրավված էին նաև «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները՝ օգնելով կազմակերպիչներին տարբեր աշխատանքներում, մասնավորապես դիմավորում և ուղեկցում էին հյուրերին, ետնաբեմում օգնում թիմերին պատրաստվել ելույթներին:	15	
34.	«Երևան ջազ ֆեստ»	Հոկտեմբերի 25-ին «Երևան ջազ ֆեստ»-ի բացման շրջանակում Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունեցել «Գրեմմի» քառակի դափնեկիր բաս կիթառահար Սթենլի Քլարքի և բենդի համերգը: Դե իսկ «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն այս համերգի շրջանակում նույնպես ակտիվ ներգրավված էին կազմակերպչական աշխատանքներում:	20	«Մեցցո Քլաիք Հաուս Քլաբ»
35.	Մանկական Եվրատեսիլ	Նոյեմբերի 24-ին և 25-ին «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորները, շրջելով Երևան քաղաքի մարդաշատ վայրերում, իրազեկում էին քաղաքացիներին անվճար քվեարկության մասին, անհրաժեշտության դեպքում օգնում էին քվեարկել:	20	Հանրային հեռուստաընկերություն
36.	«Դասական Ջեքսոն» համերգ	Դեկտեմբերի 3-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ «Դասական Ջեքսոն» խորագրով համերգը, որի ընթացքում Հայաստանում	18	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր

		<p>առաջին անգամ ներկայացվեց Փոփ-արքա Մայքլ Ջեքսոնի ամենաճանաչված եւ սիրված կատարումները՝ նոր գործիքավորմամբ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կամավորներն հերթական անգամ ներգրավված էին կազմակերպչական աշխատանքներում, մասնավորապես դիմավորում և ուղեկցում էին հյուրերին, օգնում այլ ընթացիկ աշխատանքներում:</p>		
--	--	--	--	--